ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 06

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի

ռեկտորատի 26.10. 2020թ. նիստի

Ռեկտորատի նիստը կայացավ ք. Գյումրի, Պ. Սևակ 4 հասցեում:

Հաղորդագրություններ են ուղարկել ռեկտորատի 16 (տասնվեց) անդամից 13-ը (տասներեք):

1. Ե. Սերոբյան՝ ռեկտորի ԺՊ
2. Ն. Ավետիսյան՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ
3. Գ. Նիկողոսյան՝ պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավարի ԺՊ
4. Կ. Պետրոսյան՝ ռեկտորատի քարտուղար, գիտական քարտուղար,
5. Հ. Մելքոնյան՝ արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն
6. Ա. Սարգսյան՝ գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն,
7. Ռ. Քալաջյան՝ ֆինանսատնտեսական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվառման բաժնի վարիչ-գլխավոր հաշվապահ,
8. Թ.Խաչատրյան՝գրադարան - ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնի տնօրեն,
9. Ա. Մկրտչյան՝ ռազմական ամբիոնի պետ,
10. Լ. Մարտիրոսյան՝բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկանի ԺՊ,
11. Թ. Մելիքյան՝ հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան,
12. Ռ. Մարդոյան՝ մանկավարժության ֆակուլտետի դեկան
13. Ա. Հովհաննիսյան՝ անձնակազմի կառավարման և իրավական ապահովման բաժնի պետ

Ռեկտորատի նիստին մասնակցում էր նաև ՇՊՀ ավագ դպրոցի տնօրեն Կ. Դարբինյանը և ՇՊՀ քոլեջի տնօրեն Ա. Դավինյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. **Մենք ենք, մեր սահմանները. Բոլորս Արցախի համար. «Հայաստան» հիմնադրամին համազգային միասնական դրամահավաք-արշավի շրջանակներում ՇՊՀ-ի հավաքագրած նվիրատվության մասին**

Հաղ.՝ ռեկտորի ԺՊ Ե. Սերոբյան

2. **Պատերազմական գործողություններով պայմանավորված՝ Արցախից Հայաստան ինքնաբուխ տեղափոխված և ՇՊՀ հյուրատանը հյուրընկալած մեր հայրենակիցների սննդի կազմակերպման և կացության հետ կապված հարցերի մասին**

Հաղ.՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ Ն. Ավետիսյան

3. **Բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման համակարգի ուսումնական գործընթացի մասին**

Հաղ.՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ Ն. Ավետիսյան

1. ԼՍԵՑԻՆ՝

Մենք ենք, մեր սահմանները. Բոլորս Արցախի համար. «Հայաստան» հիմնադրամին համազգային միասնական դրամահավաք-արշավի շրջանակներում ՇՊՀ-ի հավաքագրած նվիրատվության մասին

Պարան Սերոբյանը ներկայացրեց, որ համազգային միասնական դրամահավաք-արշավի շրջանակներում «Հայաստան» համահայկական հիմնադրամին ՇՊՀ-ի կողմից փոխանցվող գումարները շարունակվում են, նա նշեց, որ «Հայէկոնոմ» բանկի իրենց հաշվի համարին փոխանցվել է մեկ միլիոն իննհարյուր իննսունյոթ հազար ՀՀ դրամ:

Քոլեջի տնօրեն պարոն Դավինյանը տեղեկացրեց, որ երկու հարյուր հազար ՀՀ դրամ փոխանցվել է քոլեջի կողմից : Ռազմական ամբիոնի պետ պարոն Մկրտչյանն էլ հավելեց. որ հիսուն հազար ՀՀ դրամ փոխանցվել է ռազմական ամբիոնի ուսանողների կողմից: Պարոն Սերոբյանը ներկայացրեց նաև, որ փոխանցված գումարը ընդամենը իրենց ընդհանուր աշխատավարձի մոտ տասը տոկոսն էլ չի կազմում և հորդորեց, ովքեր հնարավորություն ունեն շարունակել փոխանցումները, քանի որ բանակին այսօր ֆինանսական աջակցությունն առավել շատ է անհրաժեշտ:

Տիկին Ավետիսյանը նշեց, որ համալսարանի տարբեր ստորաբաժանումների աշխատակիցների կողմից շարունակվում են նվիրատվությունները «Հայաստան» համահայկական հիմնադրամին և հավաստիացրեց, որ այն շարունակական է լինելու:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Տեղեկությունն ընդունել ի գիտություն:

2. ԼՍԵՑԻՆ՝

Պատերազմական գործողություններով պայմանավորված՝ Արցախից Հայաստան ինքնաբուխ տեղափոխված և ՇՊՀ հյուրատանը հյուրընկալած մեր հայրենակիցների սննդի կազմակերպման և կացության հետ կապված հարցերի մասին

Տիկին Ավետիսյանը ներկայացրեց, որ պատերազմական գործողություններով պայմանավորված՝ Արցախից Հայաստան ինքնաբուխ տեղափոխված և ՇՊՀ հյուրատանը հյուրընկալած մեր հայրենակիցների սննդի կազմակերպման հարցերի շուրջ ինքը խնդրել էր պարոն Աթոյանին մոնիտորինգ կազմակերպել, որպեսզի ավելի ճիշտ հասկանան, թե սննդի ո՞ր մասն է մնում և ավելի շատ ինչպիսի՞ սննդի կարիք կա: Պարոն Աթոյանի, «FOOD TIME» սննդի կետի տնօրենի հետ բանակցելուց հետո, իհարկե նաև հաշվի առնելով մեր հայրենակիցների կարծիքը, այս շաբաթից ոչ թե մասնաբաժնով, այլ ընդհանուր 19 հոգու համար ընդհանուր տաք սնունդ է տրվում՝ օրական 15 հազար դրամ արժողությամբ:

Պարոն Սերոբյանը հավելեց, որ հյուրատանը հյուրընկալած մեր հայրենակիցների համար սնունդ է բերվում նաև մարզպետարանի և անհատ անձանց կողմից: Նա ավելացրեց, որ հյուրատան աշխատակցուհին, որը փոխարինում է հյուրատան հիմնական աշխատակցին (վերջինս հիվանդության պատճառով է բացակայում), իսկապես ջանք ու

եռանդ չի խնայում մեր հայրենակիցների համար և ջանադրաբար է աշխատում, մի խոսքով ամեն ինչ արվում է նրանց գոհացնելու և կացության հարցերը պատշաճ կազմակերպելու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Տեղեկությունն ընդունել ի գիտություն:

3. ԼՍԵՑԻՆ՝

Բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման համակարգի ուսումնական գործընթացի մասին

Պարոն Սերոբյանը ներկայացրեց հեռակա ուսուցման համակարգի 2020-2021թթ.-ի ընդունելության արդյունքները՝ նկատելով, որ համալսարանն ընդունելություն հայտարարվել է 17 մասնագիտություններով, սակայն ցավոք սրտի 10 մասնագիտությունների գծով ունեն թերբեռնված խմբեր: Պարոն Սերոբյանը նշեց, որ իր կարծիքով, առաջիկա տարիներին թերբեռնված խմբերից խուսափելու համար ստիպված այդ մասնագիտություններով ընդունելություն չեն կատարելու:

Պարոն Սերոբյանը նշեց նաև, որ 220 դիմորդներից 169-ը ընդունվել են բուհ, 33 դիմորդ չեն ներկայացել քննություններին՝ երկրում պատերազմական դրության պայմաններում զորակոչով պայմանավորված և տղաների առողջ ետ վերադարձի պայմաններում, իր կարծիքով, նախարարության կողմից թույլտվություն կլինի, որպեսզի քննություններն հահձնեն և ուսանեն:

Տիկին Ավետիսյանը ներկայացրեց հեռակա ուսուցման համակարգի ընդունելության քննությունների կազմակերպման հետ կապված հարցերը, քանի որ պարոն Սերոբյանը այդ ժամանակահատվածում հիվանդության պատճառով գտնվում էր հիվանդանոցում:

Պարոն Սերոբյանը շնորհակալություն հայտնեց քննությունների կազմակերպիչներին, նախագահներին՝ հեռակա ուսուցման համակարգի ընդունելության քննություններն պատշաճ կազմակերպելու և անցկացնելու համար:

Տիկին Ավետիսյանը ներկայացրեց, որ 2020-2021 ուստարվա հեռակա ուսուցման համակարգի 1-ին կիսամյակի ուսումնական գործընթացը կմեկնարկի ըստ նախնական հաստատված ժամանակացույցի. սույն թվականի նոյեմբերի 2-ին, սակայն առցանց տարբերակով:

Տիկին Ավետիսյանը ներկայացրեց նաև, որ հեռակա ուսուցման համակարգի 1-ին կիսամյակի ուսումնական գործընթացը առցանց կազմակերպելու համար դեկանները և ռազմական ամբիոնի պետը պետք է համագործակցեն համալսարանում ZOOM հարթակով դասընթացները կազմակերպող պատասխանատուներ Գ. Ասատրյանի և Ն. Նազարյանի հետ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Ռ. Մարդոյանը, Ա. Մկրտչյանը:

Քանի որ հեռակա համակարգի առաջին կուրսերում դեռևս ավագներ ընտրված չեն և ուսանողների էլեկտրոնային փոստերի հասցեները դեռևս հայտնի չեն դեկաններին, միահամուռ որոշվեց համալսարանի մեծ դահլիճում կազմակերպել հանդիպում

առաջին կուրսեցիների հետ, առանձին ֆակուլտետներով՝ պահպանելով հակահամաճարակային բոլոր միջոցառումները, որպեսզի ուսանողների տվյալների հիման վրա ZOOM հարթակով դասընթացները պատշաճ կազմակերպվեն:
Տիկին Ավետիսյանը ֆակուլտետի դեկանների և ռազմական ամբիոնի պետի հետ կազմեցին գրաֆիկ, ըստ որի սույն թվականի հոկտեմբերի 27-29-ին, տարբեր ժամերի՝ առաջին կուրսի ուսանողների հետ, համալսարանի մեծ դահլիճում, պահպանելով սոցիալական հեռավորություն, կազմակերպել կարճատև հանդիպումներ՝ ուսումնական գործընթացի համար տվյալներ գրանցելու նպատակով:
Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի ուսանողների հանդիպումը դեկանի և հեռավար ուսուցումը կազմակերպող պատասխանատուների հետ նշանակվեց 29.10.2020թ.-.ի ժամը 11:00-ին:
Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետինը՝ համապատասխանաբար 29.10.2020թ.ի ժամը 13:00-ին:
Մանկավարժության ֆակուլտետի ուսանողների հանդիպումը՝ 27.10.2020թ.-ի ժամը 11:00-ին:
Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի ուսանողմերի հանդիպումը՝ 28.10. 2020թ.-ի ժամը 11:00-ին:
Ռազմական ամբիոնի ուսանողների հանդիպումը նշանակվեց ռազմական ամբիոնի շենքում՝ 27.10.2020թ.ի ժամը 13:00-ին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. 2020-2021 ուստարվա հեռակա ուսուցման համակարգի 1-ին կիսամյակի ուսումնական գործընթացի մեկնարկը կտրվի սույն թվականի նոյեմբերի 2-ին՝ առցանց տարբերակով:
2. Համալսարանի մեծ դահլիճում սույն թվականի հոկտեմբերի 27-29-ին (տարբեր ժամերի), կազմակերպել հանդիպումներ հեռակա ուսուցման համակարգում սովորող առաջին կուրսերի ուսանողների հետ:
   Հանդիպումները կազմակերպել առանձին ֆակուլտետներով՝ դեկանի և համալսարանում առցանց ուսուցումը կազմակերպող պատասխանատուների հետ՝ պահպանելով հակահամաճարակային բոլոր միջոցառումները, ուսանողների տվյալների (էլեկտրոնային փոստերի հասցեներ, հեռախոսահամարներ և այլն) գրանցման համար՝ ZOOM հարթակով դասընթացները պատշաճ կազմակերպելու նպատակով:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

Կողմ՝13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Ընթացիկ հարցեր

Պարոն Սերոբյանը համալսարանի բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին հանձնարարեց, որ եռօրյա ժամկետում իրեն հստակ ինֆորմացիա տրամադրել կորոնավիրուսով հիվանդ աշխատակիցների քանակի մասին:

Հանձնարարվեց նաև ֆակուլտետների դեկաններին և ռազմական ամբիոնի պետին, որպեսզի ռազմական դրության և կորոնավիրուսի պայմաններում դասապրոցեսները կազմակերպելու ժամանակահատվածում հստակ գրավոր հաշվետվություն ներկայացնել ուսումնական գործընթացի վերաբերյալ:

Տիկին Ավետիսյանը ներկայացրեց, որ կորոնավիրուսով հիվանդ դասախոսների մեծ մասը բարեբախտաբար հիվանդությունը թեթև են տանում և առցանց բոլոր դասապրոցեսները պարապում են, սակայն կան դասախոներ, ովքեր հիվանդանոցում են և չեն կարող ժամանակին ուսանողների հետ ուսումնական պրոցեսն իրականացնել: Տիկին Ավետիսյանը նշեց, որ իր կարծիքով հարկ է, որ իրավաչափորեն, հստակ տարանջատված որոշումներ կայացնենք ՊԴ համակազմի այն աշխատակիցների նկատմամբ, որոնք պատերազմական իրավիճակով պայմանավորված զորակոչվել կամ կամավորագրվել են, ինչպես նաև հիվանդանում են կորոնավիրուսով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Լ. Մարտիրոսյանը, Գ. Նիկողոսյանը, Թ. Մելիքյանը, Ռ. Մարդոյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հանձնարարել համալսարանի բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին եռօրյա ժամկետում՝ մինչև ս.թ.-ի հոկտեմբերի 29-ը ժամը 15:00-ն ներառյալ, հստակ ինֆորմացիա տրամադրել ռեկտորի ԺՊ-ին կորոնավիրուսով հիվանդ աշխատակիցների քանակի վերաբերյալ:
2. Հանձնարարել ֆակուլտետների դեկաններին և ռազմական ամբիոնի պետին, մինչև ս.թ.-ի հոկտեմբերի 30-ը ժամը 15:00-ն ներառյալ, հստակ գրավոր հաշվետվություն ներկայացնել ռեկտորի ԺՊ-ին ուսումնական գործընթացի վերաբերյալ:
3. Այն դասախոսները, ովքեր հիվանդ են կորոնավիրուսով, սակայն առցանց իրականացնում են ուսումնական պրոցեսը՝ պատշաճ և ժամանակին պարապելով դասաժամերն ըստ դասատախտակի, վճարվում են աշխատավարձի 100 տոկոսի չափով:

●Կորոնավիրուսով հիվանդ դասախոսների համար, ովքեր հիվանդանոցային ռեժիմում են գտնվում, համապատասխան ամբիոնների վարիչների կողմից ներկայացրած զեկուցագրերի հիման վրա, ռեկտորի ԺՊ-ի կողմից տրված հրամանով, տեղափոխել ուսումնական գործընթացը, առաղջանալուց հետո նրանք պետք է լրացնեն բաց մնացած դասաժամերը:

●Կորոնավիրուսով հիվանդ, հիվանդանոցային ռեժիմում գտնվող դասախոսների բացակա օրերը նշել և աշխատավարձները վճարել ըստ նրանց կողմից ներկայացրած անաշխատունակության թերթիկի:

●ՇՊՀ-ի վարչական այն աշխատակիցները, ովքեր կորոնավիրուսով հիվանդ են և ներկայացնում են անաշխատունակության թերթիկ, վարձատրել ըստ անաշխատունակության թերթիկի:

4. Երկրում պատերազմական գործողություններով պայմանավորված՝ ազգային բանակ զորակոչված կամ կամավորագրված դասախոսների բացակա օրերը նշել, մեկ այլ դասախոսի վրա դնել նրանց ուսումնական գործընթացի հետ կապված պարտավորությունները՝ համապատասխան ամբիոնների վարիչների կողմից ներկայացրած զեկուցագրերի հիման վրա:

   Ազգային բանակ զորակոչված կամ կամավորագրված դասախոսներին՝համապատասխան փաստաթղթային հինքեր ներկայացնելու պարագայում, վճարել աշխատավարձի 100 տոկոսով:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

Կողմ՝13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

\

Ռեկտորատի նախագահ՝ ռեկտորի ԺՊ	Ե. Սերոբյան
Ռեկտորատի քարտուղար, գիտական քարտուղար՝	Կ. Պետրոսյան
Պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավարի ԺՊ	Գ. Նիկողոսյան
ՈՒսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ	Ն. Ավետիսյան
Ռեկտորի խորհրդական՝ Ֆինանսատնտեսական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվ. բաժնի վարիչ-գլխավոր հաշվապահ՝	Ս. Շահպարոնյան Ռ. Քալաջյան
Արհեստակցական կազմակերպության նախագահ՝	Վ. Խաչատրյան
Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն՝	Ա. Սարգսյան
Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն՝	Հ. Մելքոնյան
Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնի տնօրեն՝	Թ. Խաչատրյան

Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկանի՝	Բ. Պողոսյան
Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան՝	Թ. Մելիքյան
Մանկավարժության ֆակուլտետի դեկան՝	Ռ. Մարդոյան
Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան՝	Օ. Հովհաննիսյան
Ռազմական ամբիոնի պետ՝	Ա. Մկրտչյան
Անձն.կառ.և իրավ.ապահովման բաժնի պետ՝	Ա. Հովհաննիսյան